Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
հունվարի 30-ի նիստի N 3
արձանագրային որոշման

ԾՐԱԳԻՐ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	Միջոցառումը	Նպատակը	Պատասխանատու մարմինը	Կատարման ժամկետը
		Առողջապահության ոլորտ		
1.	Բժշկական կազմակերպությունների կողմից մատուցվող վճարովի ծառայությունների մասով նոր սերնդի ՀԴՄ-ների համատարած տեղադրում	Մատուցվող բժշկական ծառայությունների ամբողջական ծավալների հաշվառման և փաստաթղթավորման խնդրի լուծում	ՀՀ առողջապահության նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ	2015 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ
2.	Բժշկական կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման վայրում վճարովի ծառայությունների գնացուցակների հրապարակում՝ ըստ հիվանդությունների և ծառայությունների առանձին տեսակների	Մատուցվող բժշկական ծառայությունների ամբողջական ծավալների հաշվառման և փաստաթղթավորման խնդրի լուծում	ՀՀ առողջապահության նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ	2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ
3.	Մատուցվող բժշկական ծառայությունների ծավալների և դրանց	Մատուցվող բժշկական ծառայությունների	ՀՀ առողջապահության	2015 թվականի դեկտեմբերի

	շրջանակներում իրացվող դեղերի համատարած առանձնացված հաշվառում	ամբողջական ծավալների և դրանց շրջանակներում իրացվող դեղերի հաշվառման և փաստաթղթավորման խնդրի լուծում	նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ	3-րդ տասնօրյակ
4.	Համավճարների, ապահովագրական ընկերություններից ստացվող փոխհատուցումների և մատուցված ծառայությունների համատարած հաշվառում	Մատուցվող բժշկական ծառայությունների ամբողջական ծավալների հաշվառման և փաստաթղթավորման խնդրի լուծում	ՀՀ առողջապահության նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ	2015 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
5.	Աշխատավարձերի խմբերի սահմանում (սանդղակավորում)՝ ըստ առանձին բժշկական կազմակերպությունների (հիվանդանոց, պոլիկլինիկա, լաբորատոր, ախտորոշիչ հիմնարկներ) և ըստ մասնագիտական որակավորման (բժիշկ, բուժքույր, սանիտար և այլն), աշխատավարձերի մեծությունների հայտարարագրման ապահովում	Աշխատավարձերի մակարդակի արտացոլում	ՀՀ առողջապահության նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ	2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ
6.	Ընտրանքային կարգով ընտրված բժշկական կազմակերպություններում դուրս գրված (ծախսագրված) դեղերի օգտագործման նպատակայնության վերլուծություն և արդյունքների	Ոլորտում ձևավորվող հարկման բազայի հայտարարագրում	ՀՀ առողջապահության նախարարություն	2015 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ

	ամփոփում			
		Շինարարության ոլորտ		
7.	Պատվիրատու և կապալառու կազմակերպությունների միջև կատարողական ակտերի կազման պարտադիր պահանջի և միասնական ձևի սահմանում, իսկ շարունակական բնույթ կրող շինարարական աշխատանքների համար կատարողականների հաշվառման, ձևակերպման միջանկյալ (եռամսյակային) հաշվետու ժամանակաշրջանների սահմանում և հաշվետվողականության ապահովում	Ոլորտում ձևավորվող հարկման բազայի հայտարարագրում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2015 թվականի հուլիսի 3-րդ տասնօրյակ
8.	Բնակչության միջոցների հաշվին իրականացվող մասնավոր շինարարության ծավալների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարությանը տեղեկատվության տրամադրում	Ոլորտում ձևավորվող հարկման բազայի հայտարարագրում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	շարունակական
9.	Լիազոր մարմինների կողմից տրամադրվող շինարարական թույլտվությունների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարությանը և ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը տեղեկությունների տրամադրում	Ոլորտում ձևավորվող հարկման բազաների նկատմամբ իրականացվող հսկողության արդյունավետության բարձրացում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	շարունակական

		Կրթության ոլորտ		
10.	ՈՒսումնական, կրթական հաստատություններում հետևյալ հարցերի՝ միասնական սկզբունքներով կարգավորում. - սովորողների միջին ցուցակային թվաքանակի որոշում, - ծառայությունների մատուցման, հասույթների ճանաչման պահի որոշում՝ ըստ կրթական ժամանակաշրջանների (փուլերի), - զեղչային համակարգի կիրառման մոտեցումների հստակեցում, այդ զեղչերի հրապարակայնացման պայմանների ապահովում	Ոլորտում ձևավորվող հարկման բազայի հայտարարագրում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ
		Էներգետիկայի, բնական պաշարների և բնապահպանության ոլորտ		
11.	Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման ցանցերում առկա կորուստների մակարդակների ուսումնասիրություն, շեղումների պատճառների բացահայտում, կորուստների հաշվարկման մեթոդների միասնականացում	Ոլորտում կորուստների ծավալների հաշվառում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ
12.	Գազալցակայաններում բաշխիչ աշտարակների միջոցով իրացվող գազի կորուստների հաշվառման և հարկման հարցի օրենսդրական կարգավորում	Կորուստների ծավալների հաշվառում	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ

13.	Օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման արդյունքում մարված պաշարների հաշվառման և արդյունքների փոխանակման գործընթացի բարելավում	Ոլորտում ձևավորվող հարկման բազայի հայտարարագրում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	2015 թվականի հուլիսի 3-րդ տասնօրյակ
14.	Ոչ մետաղական օգտակար հանածոների մարված պաշարների որոշման նպատակով տեխնոլոգիական անխուսափելի կորուստների սահմանում	Ոլորտում ձևավորվող հարկման բազայի հայտարարագրում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն	2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ
15.	Պետական հատվածի ընկերությունների տնտեսական և ֆինանսական վիճակի (ներկա և ապագա) և ակնկալվող շահույթների (վնասների) գնահատում՝ հաշվի առնելով ոլորտում իրականացվող ծրագրերը և այլ երկրների հետ համագործակցությունը	Ոլորտում ձևավորվող հարկման բազայի հայտարարագրում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	2015 թվականի հուլիսի 3-րդ տասնօրյակ
16.	Սահմանված կարգով հաշվառված՝ բնօգտագործման և (կամ) բնապահպանական վճար վճարողների վերաբերյալ հարկային մարմնին տեղեկատվության ներկայացման հարցի կարգավորում	Ոլորտում իրականացվող հարկային վարչարարության արդյունավետության բարձրացում	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն	2015 թվականի հուլիսի 3-րդ տասնօրյակ
17.	Արտադրական լցակայտերի և պոչամբարների օգտագործման դեպքում բնօգտագործման վճարների և (կամ)	Ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների	2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ

	ռոյալթիների հաշվարկման օրենսդրական կարգավորում		նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	
18.	Թափոնների հաշվառման հստակ մեխանիզմների սահմանում՝ ըստ դրանց վտանգավորության դասերի (վտանգավոր և ոչ վտանգավոր)	Ոլորտում ձևավորվող հարկման բազայի հայտարարագրում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ
19.	Շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների տեղադրման (պահման) համար բնապահպանական վճարի դրույքաչափերի կիրառման հարցերի հստակեցում	Ոլորտում ձևավորվող հարկման բազայի հայտարարագրում	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն	2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ
20.	Բնապահպանության ոլորտը կարգավորող օրենսդրությամբ («Ընդերքի մասին» ՀՀ օրենսգիրք, «Թափոնների մասին», «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքներ)	Ոլորտը կարգավորող իրավական ակտերում առկա հակասությունների վերացում	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ էներգետիկայի և բնական	2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ

	սահմանված մի շարք հասկացությունների (մասնավորապես թափոններ, դրանց տեղադրում, պահում, հատուկ հատկացված տեղեր, արդյունաբերական հրապարակ, արտադրական լցակույտեր, պոչամբար, տեխնածին հանքավայր) և դրույքաչափերի հստակեցում		պաշարների նախարարություն	
		Տրանսպորտի և կապի ոլորտ		
21.	Տարբեր սակագնային փաթեթների առանձնացված հաշվառումն ապահովող օրենսդրական կարգավորում	Ոլորտում ձևավորվող հարկման բազայի հայտարարագրում	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ
		Արտադրության, ծառայությունների և առևտրի ոլորտ		
22.	Արտադրության ոլորտում տեխնոլոգիական կորուստների և պատրաստի արտադրանքի ելքի նորմատիվների հաստատմանն ուղղված աշխատանքների ուղղությունները նախանշող հայեցակարգի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը՝ ուսումնասիրելով նաև միջազգային փորձի առանձնահատկությունները	Ոլորտում ձևավորվող հարկման բազայի հայտարարագրում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն	2015 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ
23.	Տնտեսավարող սուբյեկտների կողմից էլեկտրոնային առևտրի համակարգում իրականացվող գործարքների	Ոլորտում ձևավորվող հարկման բազայի հայտարարագրում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ

	հաշվառման խնդրի լուծում		ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	
24.	Առևտրային զեղչերի կիրառության հետ կապված հարցերի կանոնակարգում	Ոլորտում ձևավորվող հարկման բազայի հայտարարագրում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2015 թվականի հոկտեմբերի 1-ին տասնօրյակ
Գյուղատնտեսության ոլորտ				
25.	Կերերի ձեռքբերման և ծախսերի փաստաթղթավորման ու հաշվառման հարցերի կարգավորում	Ոլորտում ձևավորվող հարկման բազայի հայտարարագրում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2015 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
26.	Թռչնի ձվատվության և մսատվության նորմաների սահմանում	Ոլորտում ձևավորվող հարկման բազայի հայտարարագրում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ
27.	Թռչնի կերի ծախսի նորմաների սահմանում	Ոլորտում ձևավորվող հարկման բազայի հայտարարագրում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ
Այլ ոլորտներ				
28.	Շոու բիզնեսի ոլորտում հասույթների ամբողջական հայտարարագրման նպատակով իրացվող տոմսերի հաշվառման համակարգի ներդրման իրավական հիմքի ստեղծում	Ոլորտում ձևավորվող հարկման բազայի հայտարարագրում	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն	2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ
29.	Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով իրականացվող՝ բռնագանձված արժեքների իրացումները առավելագույն բարձր գներով կազմակերպելու նպատակով նախատեսել օրենսդրական	Հարկային պարտավորությունների ամբողջական ծավալով կատարման գործընթացի ապահովում	ՀՀ արդարադատության նախարարություն	2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ

	առավել արդյունավետ կարգավորումներ			
30.	Առանց պետական գրանցման (հարկային մարմիններում հաշվառման) գործունեության իրականացման վերաբերյալ տեղեկությունների առկայության դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այդ տեղեկությունների տրամադրում հարկային մարմիններին	Ապօրինի գործունեության նկատմամբ հսկողության արդյունավետության բարձրացում	ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	շարունակական